

ԳԱԽԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ախալքալաքի գաւառի հայ գիւղերի եկեղեցական հաշիւները:

Դարերի ընթացքում մեր մէջ իբր թէ գոյութիւն է ունեցել և ունի ընտրողական մի որոշ սիստեմ և իբր թէ ժողովուրդը ինքը կոչուած է պաշտպանելու իր շահերը որոշ սահմաններում: Բայց չը նայած այդ աւանդական և պետական օրէնքներով սրբագործուած իրաւունքներին՝ մեր ժողովուրդը քաղաքացիապէս դաստիարակուելու, հասարակական զգացմունքներ ձեռք բերելու տրամադրութիւն չէ ցոյց տալիս: Եւ այդ ցաւալի երևոյթը նկատելի է, օրինակ, ոչ միայն չինական համայնական գործերում, որոնց տնօրինում է միայն մի նեղ դասակարգ, այն է՝ ինտելիգենտ տարրերից զուրկ գիւղական դասակարգը, այլ և մեր եկեղեցական-ծխական գործերում, որոնք ըստ երևոյթին համադասակարգային (всесословный) բնաւորութիւն են կրում և, դիցուք, լոկ գիւղական դասակարգի սեփականութիւն չեն, և այդ գործերին ըստ երևոյթին պէտք է մասնակցեն ինտելիգենտ կամ կիսաինտելիգենտ տարրեր՝ գիւղերում ապրող այլ դասակարգերից: Եւ զրա գլխաւոր պատճառն այն է, որ այդ բոլոր աւանդական գեղեցիկ պարտականութիւններն ու իրաւունքները լոկ թղթի վրայ գոյութիւն ունեն և լոկ արտաքին գեղեցիկ ձևականութիւններ լինելով՝ ինչպէս ասացինք, ոչ մի նշանակութիւն չեն ունեցել մեր խաւար մասսայի գիտակցութեան կամ քաղաքացիական զգացմունքների զարգացման գործում:

Յիշաւի. ժողովրդից ընտրուած երեսփոխ, հաշւետեսներ, հաշւետեսաններ, հոգևոր վարչական ինստանցիաների օրինաւոր հսկողութիւն, ժողովրդի մասնակցութիւն եկեղեցական գու-

մարները տնօրինելու գործում և այն գեղեցիկ սկզբունքները մեր գաւառներում, մանաւանդ գիւղական խաւերում, մի-մի խաբուսիկ ֆիկցիա են...

Այդպէս է եղել գէթ մինչև հիմա Ախալքալաքի շատ գիւղերում, եթէ ոչ ամբողջ գաւառում: Բաւական է ասել, որ պաշտօնական հաշւամատեանները գրուելիս են եղել ոչ թէ ընթացիկ կերպով գիւղերում երեսփոխների կամ գոնէ քահանաների ձեռքով, այլ գիւղերից հեռու, գործակալ քահանաների «քարտուղարները» կամ, ինչպէս անցեալ տարի էր, Թիֆլիսի կոնսիստորիայում այդ նպատակով կարգուած մի ինչ որ պաշտօնեայի ձեռքով...

Բայց ամեն բան վերջ ունիւ Ախալքալաքի առաջնորդական փոխանորդ Բարգէն վարդապետ Աղաւելեանը չէ ուզում իր նախորդների նման մեր գաւառից ստացած եկեղեցական հաշւամատեանները առանց ստուգելու կոնսիստորիա ուղարկել, այլ առաջին անգամ այցելութեան գալով Ախալքալաքի գաւառի իր հօտին՝ հետը վերցնում է այդ հաշւամատեանները, որ գիւղերում, ծխական ժողովներում տեղնու-տեղը հրապարակով քննէ հաշիւները, մանաւանդ որ դրանից առաջ կոնսիստորիայից կարգադրութիւն էր եղել մեր գաւառի եկեղեցական հաշիւները կարգի բերելու:

Բարգէն վարդապետը՝ հետոն ունենալով տեղական գործակալին՝ այցելել է գաւառի 57 հայ-լուսաւորչական գիւղերը և ամեն տեղ եկեղեցու բեմից կաթողիկոսի մի կոնդակը կարգալուց և քարոզ խօսելուց յետոյ՝ հէնց եկեղեցիների մէջ ծխական ժողովներ է կազմել եկեղեցական հաշիւները ստուգելու և եկեղեցիների կամ առհասարակ ծխերի կարիքները քննելու:

Ահա այդ ժողովներում ապագայի համար շատ խրատական բաներ են բացուել: Գիւղացիները առաջին անգամն են իմանում, որ իրանց սուրբ իրաւունքն է իրանց եկեղեցու հաշիւները հրապարակով քննելու: Այդ թիւրիմացութիւնը պարզուելուց յետոյ՝ շատերի փակ լեզուները բացուում են. հաշիւները կարգալու ժամանակ այս կամ այն գիւղում շատ գիւղացիներ նկատողութիւններ են անում: Դուրս է գալիս, որ մի տեղ «հայ-իրի» փողը չի մոցրուած մատուանի մէջ, մի ուրիշ տեղ ստացած գումարի փոխարէն դարձեալ մուրհակն է ներկայացնում, և նախկին պարտապան գիւղացին ստիպուած է ապացուցանել, որ փողը վճարել է, բայց մուրհակը յետ չէ ստացել... Եւ նեղն ընկած «աթոռակալները» (երեսփոխները) խոստովանել են այդ ամենը և խոտուացել են վճարել:

Սակայն այդ ընդհանուր հաշվեքննությունը ուրիշ շատ բաներ էլ է պարզում:

Առանց ծխականների կամքը հարցնելու՝ Արագովա գիւղի եկեղեցական գումարներից 500 ռուբլի է վերցրել նախկին գործակալ քահանան՝ կոնսիստորիա ուղարկելու անյայտ նպատակի համար*):

Վաչիան գիւղի երեսփոխը մատենանում ցոյց է տուել, թէ իբրև եկեղեցապատկան 120 ռուբլին «սեւաֆը» (հեղեղը) քչել տարել է. բայց ծխական ժողովում պարզվում է, որ սուտ է, և երեսփոխը հանդիսաւոր կերպով խոստանում է վճարել:

Դատէշ գիւղի եկեղեցու մատենանում ցոյց տուած 210 ռ. գումարը ամբողջովին աներևոյթացել է, և այդ եկեղեցին հիմա կոպէկ է՝ ունի:

Օրճա գիւղի եկեղեցու գումարներից անհետացել է 3577 ռուբլի 33 կոպէկ:

Աղաւբէթ գիւղի եկեղեցու գումարներից պակասում է 144 ռ.:

Ականա գիւղի եկեղեցու՝ մուրհակով տուած գումարներից 195 ռ. մուրհակի ժամանակը անցել է: Այդ եկեղեցին արտերից ստանալիք ունի նաև 428 ռուբլի:

Բզաւէթ գիւղի եկեղեցական գումարներից 300 ռուբլի կերել է երեսփոխը:

Բուռնաշէթ գիւղի եկեղեցական գումարներից 531 ռ. շարունակ ինն տարի գտնուում էր տեղական տանուտէրի մօտ առանց մուրհակի: Փոխանորդ վարդապետը նոր միայն մուրհակ է առել նրանից:

*) Առանց ժողովրդի կամքը հարցնելու՝ եկեղ. փողերը տնօրինելը հոգևոր իշխանութեան կողմից, ինչպէս երևում է, բացառիկ երևոյթ է մեզանում: Ախալցխայի՝ Ս. Փրկիչ եկեղեցու 19 հազար դեսեատին հողի տարեկան կապալավարձը, մօտ 20,000 ռուբլի, իւրաքանչիւր տարի ստանում է կոնսիստորիան, և կարծես ժողովուրդը այդ գումարի տէրը չէ, քանի որ առանց նրա կամքը հարցնելու՝ այդ գումարներից փոխառութիւն են տրուում Բաթումի եկեղեցուն կամ նրանով ինչ որ խանութներ են շինում Թիֆլիսում, կամ էջմիածնում են ինչ որ բանի վրայ գործադրում: Անկասկած Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցու նորընտիր ինտելիգենտ երեսփոխը կը պաշտպանս այն ծխի իրաւունքները և շահերը, որի ներկայացուցիչն է ինքը. բայց ո՞վ պէտք է պաշտպանէ Արագովա գիւղի ժողովրդի և եկեղեցու շահերը... Ե՛նչ քանի տարի է՝ այդ գիւղի եկեղեցին փակուած է խարխուլ լինելու պատճառով. հիմա միայն կառավարութիւնից թայտուութիւն ստացուեց նոր եկեղեցի շինելու, և ժողովուրդը փողի կարիք ունի: Եթէ, յիշուի, կոնսիստորիան 500 ռ. վերցրել է այդ գիւղի գումարներից, ինչպէս ասում են գիւղացիները, և դրուած է մատենանում, նա պարտական է վերադարձնելու այդ գումարը, որը կը գործադրուի եկեղեցու շինութեան վրայ:

Ձակ գիւղի եկեղ. գումարներից 80 ր. նախկին երեսփոխն է կերել, իսկ 135 ր. 8 կոպ.՝ ուրիշները. վերջիններս խոստացել են վճարել:

Թխախլա գիւղի եկեղ. գումարներից 1540 ր. գտնուում է քաղաքացիների վրայ:

Ղադօ (կամ Ղադօլար) գիւղի եկեղ. գումարներից պակասում էր 57 ր. 40 կոպ., որի համար մուրհակ է ստացուել:

Մերինիա գիւղի եկեղեցու՝ մուրհակով տուած գումարներից 217 րուբլու մուրհակների ժամանակը անցել է:

Չանգուրու գիւղի եկեղեցական գումարներից չէ երեսում 360 ր. 90 կոպ.:

Սուլդալի եկեղ. գումարներից պակասում է 48 ր. 54 կոպ.:

Գանձա գիւղի երեսփոխը կերել էր 100 ր., որի համար մուրհակ է ստացուած:

Խոճաբէկ գիւղի եկեղեցապատկան խանութում առուտուրով պարապուող գինեկաճառը՝ գինիով և արաղով փակելով գիւղի «առաջաւորների» բերանները՝ աջողեցնում էր ոչինչ չը վճարել եկեղեցուն. բայց հիմա կանոնաւոր պայման է կապուած:

Մաճաղիա գիւղի եկեղեցին արտերից ստանալիք ունի 600 րուբլի:

Այդպիսով վերև յիշած գիւղերի մատեաններում ցոյց տուած եկեղեցական գումարներից պակասում էր 8644 ր. 25 կ., որից 1028 ր. եկեղեցական արտերից պէտք է ստացուէին, իսկ 7616 ր. 25 կոպ. կանխիկ դրամներից էին կորած. այս գումարից 412 ր. մուրհակների ժամանակը անցել է. 943 ր. 56 կոպէկ իւրացնողները որոշուել են, և նրանցից օրինաւոր մուրհակներ են առնուել. մնացածից 1540 ր. քաղաքացու վճարայ է, իսկ 4720 ր. 70 կոպ. առայժմ անյայտ է, և այդ գումարի համար քննութիւնները պէտք է շարունակուեն: Նոյնպէս քննութիւն պէտք է սկսուի և այն եկեղեցապատկան հացահատիկի մասին, որ թագքրել էր Գիւմուրդա գիւղի երեսփոխը:

Ուրեմն եթէ անյայտ մնացած 4720 ր. 70 կոպ. գումարի վրայ աւելացնենք և ժամանակը անցած մուրհակների գումարները, կը տեսնենք, որ մատեաններում նշանակած գումարներից պակասում է 5132 ր. 70 կոպ.: Բայց թէ տասնեակ տարիների ընթացքում՝ որքան գումարներ են կորել ներկայ մատեաններից դուրս, նրանց դրելուց առաջ, դա անկարելի է որոշել:

Գաւառիս 44 գիւղերի եկեղեցիները ունեն մուրհակներով՝ 32638 ր. 75 կոպ., առձեռն գումար երեսփոխների մօտ՝ 398

ր. 4 կոպ., իսկ գաւառական գանձատան կից խնայողական կասսայում՝ 8673 ր. 60 կոպ., ընդամենը 41,710 ռուբլի 39 կոպ., չը հաշուած մատենաներից պակասած 8644 ր. 25 կոպէկը:

Մնում եմ Աբուլ, Բալխօ, Դիլիֆ, Խանդօ, Մեծ-Խանչալի, Փոքր-Խանչալի, Կորխ, Կօչիօ, Ղաուրմա, Սաթխա, Թոկ-Սամ-սար, Տրկնա, Օլավէրթ և Մօլիթ գիւղերը, որոնց վերաբերմամբ տեղեկութիւնները պակասում են:

Եկեղեցապատկան փողը գանձատուն տալը մի ուրախալի նորութիւն է մեզանում՝ չնորհիւ ներկայ փոխանորդ և գործակալ վարդապետներին: Յանկալի է, որ ըստը գումարներն ըստացուեն եկեղեցիներէ պարտապաններից և մտցնուեն գանձատուն:

Քանի որ մեր ներկայ երեսփոխները ոչ առաջուայ կրօնական երկրւղածութիւնն ու ջերմեռանդութիւնն ունեն դէպի եկեղեցու շահերը, ոչ էլ ժողովրդի վստահութեանը արժանաշանքներին վայել բարեխղճութիւն, պարտաճանաչութիւն և հասարակական բնազդ,—պէտք է դէթ այդ միջոցով սանձահարել նրանց գրգռուած ախորժակները: Դրանից յետոյ միայն կարելի կը լինի այդ գումարները ժողովրդի ցանկութեամբ և պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութեամբ գործադրել եկեղեցիներէ պայծառութեան և ծխերի մտաւոր-բարոյական և նոյն իսկ տնտեսական կարիքների վրայ: Սակայն այդ մասին մի այլ անգամ:

ՍԱԼԼԻԻՄԵԱՆ